

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ճամբարակի սոցիալական ծառայության տարածքային
գործակալության սոցիալական աջակցության
բաժնի երկրորդ կարգի մասնագետ
/ծածկագիր՝ 64-4.3-38/**

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ ընտանեկան նպաստի /այսուհետ՝ Նպաստ/, երեխայի ծննդյան միանվագ Նպաստի, երեխայի խնամքի Նպաստի, սահմանված միանվագ օգնությունների տրամադրման աշխատանքներին, մասնակցում է անապահով ընտանիքների հայտնաբերման աշխատանքներին՝ ստացած դիմումների ահազանգերի, Գործակալության պետի հաստատած ժամանակացույցի կամ անհրաժեշտության դեպքում՝ կատարվող տնային այցելությունների միջոցով, սահմանված կարգով և ժամկետներում ընտանիքների անապահովության գնահատման, երեխայի ծննդյան միանվագ Նպաստի և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի Նպաստների տեղեկատվական բազա է մուտքագրում համապատասխան գործերում առկա անհրաժեշտ տվյալները, Նպաստի իրավունքի դեպքում ծրագրային մեթոդով ստանում է Նպաստի նշանակման կարգադրություն և ներկայացնում է Գործակալության գլխավոր մասնագետին Գործակալության պետի հաստատմանը ներկայացնելու համար.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի
- նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրի գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1,2/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում՝ /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /թաստաթղթերի/ պատճեն /պատճենները/
- աշխատանքային գրքույկի պատճենը՝ ունենալու դեպքում/
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3.4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 13⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է <<4>> հունիսի 2015թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/: